ուած նշենները իրենց խարոյկը դէմ են տը-
ուել երկնքին, նկարիչը իր յուզումը արտա-
յայտելու համար ասում է.—

— Զանգուի ափին թութը հասել է: Զով,
հիւթեղ եւ անուշ պտուղ է թութը Հայաստա-
նում: Ճերմակ մեղր է, բերանի մէջ հալւում
է...

Ահա գալիս է դերասանը: Նրան տեսել եմ
Պոլսում եւ տեսել եմ Փարիզում. փոխւում է
ըստ միջավայրի, զարմանալի ճկունութեամբ:
Խելացի, բանիմաց եւ վայելուչ: Հագել է հա-
մեստ զգեստ, զսպուած ժպիտ, խոհեմ ձեւեր,
ըստ պարագայի: Ծիծաղում է՝ ոչ շատ բար-
ձրը, խօսում է՝ երբեմն, քաղաքավարի է՝ ոչ
չափազանց, ինչպէս վայել է բանուորա-գիւ-
ղացիական իշխանութեան տակ ապրող քաղա-
քացիին: Չափազանց քաղաքավարութիւնը
կարող է բուրժուական մտայնութեան հետե-
ւանք լինել, իսկ նա ժողովրդական մասսաների
հլու ծառան է եւ ուրիշ ոչինչ:

Բարձրանա՞նք: Մի վայրկեան եւս... Ա-
հա վազելով գալիս է ամերիկահայ մտաւորա-
կանը: Շունչը կտրած, միշտ աղմկելով: Պո-
ռում է, կանչում, բարձրաձայն ծիծաղում:
Կարճ տաբատ, թաւիշէ ժաքէթ, a la b'ebe'
չապիկ. կէս արտիստ, կէս որսորդ, կէս ըմ-
բիշ: Լրագրող, վիպագիր, երգիծաբան, թա-
տերագիր:

Բարձրանա՛նք:

«Իշխանը» դեռ քնած է: Պատշգամի մէջ
մեծ մի սեղան եւ մեծ մի ինքնաեռ: Մի անկո-
ղին, ծառը սթռռ, սթռռի վրայ ծխախոտի
տուփ եւ երկաթէ մի մուրճ: Հագիւ ներս մը-
տանք, վերմակը շարժուեց եւ դուրս ցցուեց
մի գլուխ: Մազերը տակից խուզուած, կոլոր,
մեծդի, հաստ գծերով: Մարդը բազուկը կար-
կառեց՝ բարե՛ւ, վերմակը նետեց եւ ամբող-
ջովին հագուած դուրս եկաւ: Ճարտարագէտ,
հանքարան, այն որ Հայաստանի բոլոր քարե-
րը ճանաչում է, ամէն տեղ եղել է, ամէն ինչ
գիտէ: Ժպտաց եւ թէյ առաջարկեց:

Յետոյ մէկը միւսի ետեւից եկան —

Խորհրդային թերթի խմբագիրը, կեղծ
Ժպիտը երեսին, ոստոստուն, շինծու ընկերա-
կան սրտբացութիւն ձեւացնելով, ամէնքի հետ
մտերիմ, շատախօս, կոլոր եւ կարճ:

Ընկեր կոմիսարներից մէկը՝ մարքսիզմը
խառնուած անորոշ գեղագիտական ձգտում-
ների հետ: Զանձրոյթով լեցուն սպասողական
մի տեսակ դէնդիզմ, կանացի, կերպընկալ,
անկայուն: Մեծ ցանկութիւն ապրելու: Բոլ-
շեւիզմը նրա համար միջոց է ձեռք բերելու
համար «կուլտուրական» կեանքի յարմարու-
թիւնները, ու ներքնապէս աւելի բաժանում է
ուալդեան տեսակէտը սոցիալիզմի մասին՝ ե-
սասիրական տեսակէտը, քան որեւէ ուրիշը:
Սիրում է գեղեցիկ, ոսկեզօծ կաղմերով գրքե-
րը, Բիրդսլէի նկարները, Սալոմէն եւ պրե-
ռաֆաելականները, Մոսկուան եւ իր դիւրա-
մատչելի կանայք, իր բալետը, իր արուեստա-
գէտների ազատ բարքերը: Հայաստանում
ապրելը համարում է դերութիւն, պարտա-
դրուած լուծ եւ հազար պատճառներ է գըտ-
նում դուրս նետուելու համար: Իր հրապա-
բակախօսութեան մէջ, սակայն, մնում է մո-
լեռանդօրէն ուղղափառ, ծայրայեղ, անսիրտ:
Իրականի մէջ թոյլ, կամազուրկ, տպաւորու-
թիւններով տարուող մարդ է: Նախընտրում է
արտիստների, գրողների ընկերութիւնը, սըբ-
ճարանի կեանքը, անիշխանական բարքերը եւ
ճաշակով ընտրուած փողկապը:

Տանտիրուհին անհանգիստ շրջում է սեն-
եակից սենեակ: Իշխանը հագւում է: Իշխանը
հագւո՞ւմ է... Հիւրերը անմիջապէս լռում են,
լրջանում, կուչ գալիս: Տիկինը, մեղր եւ կա-
րագ քսած հացը ձեռքին, մտահոգ վերադառ-
նում է եւ ցած ձայնով յայտնում. «Ոչի՛նչ չի
ուզում ուտել»... Մօտակայ սենեակից խուլ
մրթմրթոց է լսւում. տիկինը հացը ձեռքին՝
վազում է ներս:

Նայում եմ չորս կողմը. ամէն ինչ՝ կահ
կարասիները, անկողինը, սեղանի վրայ դըր-
ուած ինքնաեռը՝ կառքի ճանապարհների կա-
յանն է յիշեցնում: Ամէն ինչ ժամանակաւոր
եւ պատահական ընոյթ է կրում: Ոչ մի մնա-
յուն եւ հաստատուն բան: Անցք: Եւ այդպէս,
գրեթէ բոլոր եկեղեցիների տուներում: Ամէնքս
էլ նմանում ենք հեռաւոր գաղութներ մեկնած
գործի մարդկանց, որոնք չտապում են իրենց
պարտքը կատարել եւ շուտով տուն վերադառ-
նալ: Իսկ տունը ո՞րտեղ է՝ ոչ ոք չի իմա-
նում: Ոչ ոք ոչինչ չի իմանում: Հորիզոնը փը-
լած է, անորոշը մեզ կլանում է եւ հոգին, ա-
նապատի մէջ միայնակ կորած ուղտի նման իր

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան